Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետը (այսուհետ՝ Ֆակուլտետ) ՀՀ ոստիկանության ծառայողների վերապատրաստման գործընթացի կազմակերպումն ու իրականացումն ապահովող կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ Կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի <<Ոստիկանության ծառայողի վերապատրաստման /որակավորման/ անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին>> թիվ 174-Ն որոշմամբ, «ՀՀ ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումով, ՀՀ ոստիկանության պետի հրամաններով, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներքին իրավական ակտերով և այլ իրավական ակտերով:

3. Ֆակուլտետի լրիվ անվանումն է՝
Հայերեն՝ «Վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետ»:
Ռուսերեն՝ «Факультет переподготовки и аттестации».
Անգլերեն՝ «Faculty of training and attestation».
4. Ֆակուլտետը, որպես ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կառուցվածքային միավոր, ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է ՀՀ ոստիկանության պետի հրամանով:
5. Ֆակուլտետն իր գործունեությունն իրականացնում է կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի ամբիոնների, ուսումնաօժանդակ այլ ստորաբաժանումների հետ համագործակցության միջոցով:
6. Ֆակուլտետի կանոնադրությունը, դրա փոփոխությունները և (կամ) լրացումները հաստատվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով:
7. Ֆակուլտետն օժտված է սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված լիազորություններով:

8. Ֆակուլտետն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ռազմավարական ծրագրի և սույն կանոնադրության 2-րդ կետով նախատեսված իրավական ակտերի հիման վրա:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Ֆակուլտետի պետը:

10. *Ֆակուլտետի պետը նշանակվում է ՀՀ ոստիկանության պետի հրամանով:*

11. Ֆակուլտետի պետը հանդիսանում է ֆակուլտետի ամբողջ անձնակազմի անմիջական պետը և օգտվում է ի պաշտոնե իրեն վերապահված լիազորություններից:

12. *Ֆակուլտետի պետի լիազորություններն են՝*

1) ղեկավարում է ֆակուլտետի աշխատանքները.

2) անմիջականորեն ենթարկվում է կրթահամալիրի պետին և նրա տեղակալին.

3) ղեկավարում է ֆակուլտետի ուսումնական, կազմակերպչական, դաստիարակչական աշխատանքները.

4) իրականացնում է ֆակուլտետի մշտական անձնակազմի կադրերի ընտրությունն ու տեղաբաշխումը՝ միջնորդություն է ներկայացնում կոչում շնորհելու, խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու մասին.

5) միջնորդություն է ներկայացնում վերապատրաստվողներին խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.

6) վերահսկում է ուսումնական և առարկայական թեմատիկ պլանների, ուսումնական գործընթացի ժամանակացույցերի /գրաֆիկների/ կատարման ընթացքը.

7) կազմակերպում է քննությունների և ստուգարքների անցկացման վերահսկողությունը.

8) պատրաստում և կրթահամալիրի պետի հաստատմանն է ներկայացնում վերապատրաստվող խմբերի ուսումնառության կազմակերպման և ավարտման հրամանների նախագծերը.

9) կոորդինացնում և իրականացնում է համագործակցման աշխատանքներ կրթահամալիրի և այլ բուհերի համապատասխան ֆակուլտետների, ոստիկանության շահագրիգիռ ստորաբաժանումների հետ.

10) ֆակուլտետի պետը պարտավոր է բարեխղճորեն իրականացնել իր գործառույթները, որոնք ողջամտորեն պետք է ուղղված լինեն կրթահամալիրի օրինական շահերի ապահովմանը:

13. Ֆակուլտետի պետի հրահանգների ու հրամանների կատարումը պարտադիր են Ֆակուլտետի աշխատողների և վերապատրաստվողների համար:

14. Ֆակուլտետի գործունեության ընթացիկ հարցերի քննարկման համար Ֆակուլտետում գործում է խորհրդակցական մարմին՝ ֆակուլտետի խորհուրդ:

15. Ֆակուլտետի խորհուրդը Ֆակուլտետի պետի նախագահությամբ գործող խորհրդակցական մարմին է, որի որոշումները պարտադիր են վերապատրաստվող անձնակազմի և աշխատողների համար:

16. Խորհուրդը ձևավորվում է հետևյալ կազմով՝

1)խոհուրդը ձևավորվում է մշտական և փոփոխական կազմով.

2)խորհրդի մշտական անդամներ են՝ Ֆակուլտետի պետը (նախագահ), ակադեմիայի և քոլեջի համապատասխան ամբիոնների ներկայացուցիչներ.

3) խորհրդի փոփոխական անդամներն են՝ նիստի անցկացման ժամանակ առկա խմբերերից վերապատրաստվողները (մինչև Խորհրդի կազմի անդամների 25 %).

4)ֆակուլտետի պետի առաջարկությամբ խորհրդի կազմում կարող են ընդգրկվել ֆակուլտետի, ինչպես նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական գործընթացի իրականացմանը աջակցող ստորաբաժանումների ներկայացուցիչները (մինչև Խորհրդի կազմի անդամների 25 %).

5) խորհրդի նիստերին կարող են հրավիրվել կրթահամալիրի կամ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներ:

17. Խորհուրդը պետք է բաղկացած լինի առնվազն 11 անդամից:

18. Խորհրդի լիազորության ժամկետը 5 տարի է: Ֆակուլտետի խորհրդի կազմը հաստատվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով:

19. Ֆակուլտետի խորհուրդը'

1) քննարկում է Ֆակուլտետի ուսումնական և այլ գործունեության հետ կապված հարցեր.

2) լսում է ֆակուլտետի պետի ամենամյա հաշվետվությունները.

3)մշակում և իրականացնում է միջոցառումներ Ֆակուլտետում վերապատրաստվող անձնակազմի կրթության որակը բարձրացնելու ուղղությամբ.

4) լուծում է սույն կանոնադրությունից բխող՝ Ֆակուլտետի ուսումնամեթոդական աշխատանքների հետ կապված այլ հարցեր:

20. Ֆակուլտետի խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցում է անդամների առնվազն 2/3-ը: Ֆակուլտետի խորհրդում որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Խորհրդի քարտուղարի թեկնածուն առաջադրվում է խորհրդի նախագահի կողմից և ընտրվում է խորհրդի նիստում: Խորհրդի քարտուղարը նախապատրաստում է խորհրդի նիստի օրակարգի նախագիծը և խորհրդի անդամներին տեղեկացնում է այդ մասին նիստի անցկացումից առնվազն երեք օր առաջ:

21. Խորհրդի նախագահն իրականացնում է հսկողություն խորհրդի որոշումների կատարման նկատմամբ:
22. Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհարժեշտության:
23. Ֆակուլտետի պետի բացակայության դեպքում խորհրդի նիստը վարում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով նշանակված անձը:
24. Ֆակուլտետի խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ժամանակը, ներկա անդամների անունները, օրակարգի հարցերը, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նախագահողը և քարտուղարը: Քարտուղարը կրում է անմիջական պատասխանատվություն արձանագրությունը ճիշտ կազմելու համար:
25. Խորհրդը կարող է իրացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26. Ֆակուլտետի խնդիրներն են՝
1) կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ ապահովել օրինականության պահպանումը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գործունեության ընթացքում, գործուն մասնակցություն ցուցաբերել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներքին կարգապահական կանոնների պահպանմանն ուղղված միջոցառումների մշակմանն ու իրականացմանը.
2) ապահովել ուսուցման որակի միջազգային (եվրոպական) չափանիշների ներդրումը.
3) ապահովել կրթական գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը.
4) նպաստել վերապատրաստվողների արժեհամակարգի ձևավորմանը՝ հիմնված ազգային և համամարդկային, մարդասիրական, և բարոյական սկզբունքներով:

27. **Ֆակուլտետի գործառույթներն են՝**
1) կրթական ոլորտում՝
ա. կազմակերպել Ֆակուլտետի վերապատրաստվողների ինքնուրույն և լսարանային աշխատանքները.

բ. ապահովել կրթական ծրագրերով նախատեսված դասախոսությունների, գործնական, և այլ պարապունքների պատշաճ անցկացումը.
գ. վերահսկել կրթության կազմակերպումը պետական չափորոշիչներին համապատասխան.
դ. կազմակերպել և վերահսկել գիտելիքների ստուգման անցկացումը.
ե. իր իրավասության շրջանակում իրականացնել ուսուցման որակի մշտադիտարկում:
2) մեթոդական ոլորտում'
ա. կազմակերպել և վերահսկել կրթական գործունեության մեթոդական և տեղեկատվական համակարգի ապահովումը.
դ. աջակցել վերապատրաստվողների ինքնակառավարման մեխանիզմների զարգացմանը:
28. Ֆակուլտետի լիազորություններն են'
1) վերահսկողություն իրականացնել առաջադրված խնդիրներին և պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնական գործընթացի իրականացման նկատմամբ.
2) արդյունավետ օգտագործել Ֆակուլտետի կրթական և ստեղծագործական կարողությունները
3) կազմակերպել և ապահովել վերապատրաստվողների ծառայության վայրի և կրթահամալիրի միջև կապը՝ ուսումնական, կարգապահական հարցերի վերաբերյալ:
4) օգտագործել ժամանակակից կրթական, տեղեկատվական արդյունավետ տեխնոլոգիաները' ֆակուլտետի առջև դրված խնդիրների և նպատակների իրագործման համար.
5) արդյունավետ օգտագործել Ֆակուլտետին հատկացված նյութատեխնիկական, տեղեկատվական և մտավոր ռեսուրսները.
6) իրականացնել իր գործունեությունից բխող այլ լիազորություններ:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

29. Ֆակուլտետը ղեկավարում է ֆակուլտետի պետը
1) ուսումնական գործընթացը կազմակերպում է ֆակուլտետի աշխատակազմի՝ ՀԿՀ ավագ տեսուչի, ավագ տեսուչների և կրտսեր տեսուչի միջոցով.

30. Ֆակուլտետը համագործակցում է '

1) Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի հետ.

2) Վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի հետ.

3) Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի հետ.

4) Քրեական դատավարության ամբիոնի հետ.

5) Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի հետ.

6) Օպերատիվ հետախուզական գործունեության և կրիմինալիստիկայի ամբիոնի հետ.

7) Ընդհանուր և ՈԶ տակտիկական պատրաստականության ամբիոնի հետ.

8) Լեզուների ամբիոնի հետ.

9) Մարտական, ֆիզիկական և տակտիկական պատրաստականության ամբիոնի հետ.

10) Հասարակագիտական առարկաների ամբիոնի հետ.

11) Տեխնիկական առարկաների ամբիոնի հետ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՊԵՐ

31. Ֆակուլտետը համագործակցում է'

1) համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ միջոցառումների (կոնֆերանսներ, խորհրդակցություններ և այլն) կամ ուսումնական գործընթացի կազմակերպման, այդ թվում' նաև դասացուցակների համապատասխանեցման նպատակով.

2) այլ բուհերի համապատասխան Ֆակուլտետների հետ' համատեղ ծրագրերի իրականացման և այլ նպատակներով' կրթահամալիրի կանոնադրության, կառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա.

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

32. Ֆակուլտետի առջև դրված խնդիրների ու գործառույթների պատշաճ և ժամանակին իրականացման պատասխանատվությունը կրում է Ֆակուլտետի պետը:

33. Ֆակուլտետի աշխատակիցների իրավունքները և պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ և աշխատանքային (ծառայությունների վճարովի մատուցման) պայմանագրով, սույն կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և սահմանված կարգով հաստատված այլ փաստաթղթերով: